ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԵՊ 1-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «16» հունիս 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ալեքսանդր Մելիքյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետև՝ Որոշում)՝ Որոշման «1146. Հանրակրթության ծրագիր» բյուջետային ծրագրի 11019. «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում» միջոցառման (այսուհետև՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Պայմանագրով սահմանված վճարը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում» նախագծի կազմակերպումը (այսուհետև՝ միջոցառումներ)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. Ծրագրի՝ Հավելված N 1, և նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ,

2.1.3. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել Պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ Պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի Կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (Պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Կազմակերպության կողմից Պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. Կազմակերպության կողմից Պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պետական մարմնից պահանջել ընդունել Պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. Պետական մարմնից պահանջել վերացնել Կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պետական մարմնի մեղքով Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել Պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու և Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր

ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) Ծրագրով նախատեսված դեպքերում իր և Կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Կազմակերպությանը, այդ թվում՝ Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել Պայմանագրի պահանջներին համապատասխան Կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են Կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ և եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել Պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն Պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ,

2.4.4. Պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. Պետական մարմնին անհապաղ հայտնել Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. Պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է Պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում՝ արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով, եռամսյակային կտրվածքով (Հավելված N 4),

2.4.9. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ Ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. Պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք Պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան և առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ**,

2.4.14. Պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան Պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20-երորդ օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար Պետական մարմինը Կազմակերպությանը հատկացնում է 7701300 (յոթ միլիոն յոթ հարյուր մեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ հարկերը, տուրքերը և

պարտադիր այլ վճարները) Որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Կազմակերպությանը վճարվում է Կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ Պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պետական մարմինն իրավունք ունի վերանայել Պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. դեկտեմբերի 12-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև դեկտեմբերի 30-ը:

4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները Կազմակերպության կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 5):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ

հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Պայմանագրով Կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, Կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված Ծրագիրը հրապարակվում են Պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը Պայմանագրով նախատեսված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է Պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամ**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Կորյուն 19ա
Կառավարական տուն 2	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2050622081321001
Հ/Հ 900011000719	ՀՎՀՀ 02642671
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղա՝ Տնօրեն	
Հ. Հակոբյան	Ա. Մելիքյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1
«16» հունիս 2023 թ. կնքված
N ԱԵՊ 1-2023 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Պահանջվող գումարը** (ՀՀ դրամ)
«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում	Հանրակրթական ուսումնական հաստատությունների «Ազգային երգ ու պար» առարկայի մանկավարժական կադրերի վերապատրաստում և մասնագիտական զարգացում	Մինչև վերապատրաստումների մեկնարկը 3 սեմինարի կազմակերպում վերապատրաստվող ուսուցիչների համար (կոնֆերանս-դահլիճի վարձակալություն, սուրճի ընդմիջում, օժանդասկ նյութերի տպագրություն): Կրթություն պետական կառավարման լիազորված մարմնի հայտի հիման վրա «Ազգային երգ ու պար» առարկայի վերապատրաստման ենթակա մանկավարժական կադրերի խմբերի ձևավորում (100 դպրոցի 150 ուսուցիչ, 4 խումբ՝ Երևանում և մարզերում) և վերապատրաստումների դասընթացների ժամանակացույցերի մշակում և հաստատում: Վերապատրաստումների կազմակերպում 2 փուլով: Առաջին փուլ՝ 10 օր, վեցական ժամով (60 ժամ), Երկրորդ փուլ՝ 5 օր, վեցական ժամով (30 ժամ): Դասախոսի վարձատրությունը մեկ ժամի համար սահմանել 2900 դրամ: 2020 թվականին վերապատրաստումն անցած թվով 100 ուսուցիչների թեստավորում, հաշվետու համերգ, վերապատրաստվողների	Վերապատրաստման արդյունքում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում կաշխատեն «Ազգային երգ ու պար» առարկայի 150 վերապատրաստված ուսուցիչներ, ովքեր իրենց աշխատանքները կկարողանան կազմակերպել 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների ծրագրերին համապատասխան	**12.12.2023 թ.**	**7 701 300**

		ընտրություն՝ յուրաքանչյուր խմբի համար նախատեսելով երկու դասախոս: Վերապատրաստող մասնագետների սեմինար պարապմունքների անցկացում: Վերապատրաստումների մոնիտորինգ: Հաշվետու համերգի կազմակերպում:			
Ընդամենը					**7 701 300**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011000719
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամ

ք. Երևան, Կորյուն 19ա

«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050622081321001
ՀՎՀՀ 02642671

Տնօրեն՝

_____Ա. Մելիքյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
«16» հունիս 2023 թ. կնքված
N **ԱԵՊ 1-2023** պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում

hh	Անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Մեկ միավորի արժեք (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	Ծանոթություն
1	**Աշխատանքի վարձատրություն, ներառյալ հարկեր,* այդ թվում՝**				**5 268 000**	
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	3	280 000	840 000	հաստիք
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	3	200 000	600 000	հաստիք
1.3	Պարուսույց /միջինով	անձ	10	191 400	1 914 000	հաստիք
1.4	Երգուսույց/ միջինով	անձ	10	191 400	1 914 000	հաստիք
2	**Գործուղում, այդ թվում**				**1 180 000**	
2.1	Օրապահիկ /2 հոգի	օր	18	5 000	180 000	մոնիտորինգ
2.2	Գիշերավարձ/2 հոգի	օր	17	5 000	170 000	մոնիտորինգ
2.3	Օրապահիկ/4 հոգի	օր	15	5 000	300 000	վերապատրաստումներ
2.4	Գիշերավարձ/4 հոգի	օր	13	5 000	260 000	վերապատրաստումներ
2.5	Օրապահիկ/6 հոգի	օր	5	5 000	150 000	թեստավորում
2.6	Գիշերավարձ/6 հոգի	օր	4	5 000	120 000	թեստավորում
3	**Ծառայություններ, այդ թվում՝**				**1 034 000**	
3.1	Սեմինարների կազմակերպում	անգամ	3	85 000	255 000	կոնֆերանս-դահլիճի վարձակալություն, որն իր մեջ ներառում է սուրճի ընդմիջման կազմակերպումը
3.2	Վերապատրաստող մասնագետների սեմինար պարապմունքների անցկացում	ամիս	4	75 500	302 000	Քաղիրավական ծառայություն
3.3	Հաշվետու համերգի և հավատագրի հանձնման կազմակերպում, այդ թվում՝				300 000	
3.3.1	Նկարահանման ծառայություն	դրամ	1	150 000	150 000	
3.3.2	Տեխնիկական սպասարկում	դրամ	1	150 000	150 000	
3.4	Տպագրական ծառայություն, այդ թվում՝				177 000	
3.4.1	Տպագրական ծառութություն 1	դրամ	1	125 000	125 000	A4 300գր. գունավոր երկկողմանի - վկայականներ
3.4.2	Տպագրական ծառութություն 2	դրամ	1	7 000	7 000	A4 300գր. գունավոր միակողմանի - շնորհակալագրեր
3.4.2	Տպագրական ծառութություն 3	դրամ	1	45 000	45 000	A4 300գր. սև ու սպիտակ – օժանդակ նյութեր

4	**Նյութեր, պարագաներ**				**219 300**	
4.1	Թափանցիկ ֆայլ	հատ	600	15	9 000	
4.2	Թղթապանակ	հատ	100	200	20 000	
4.3	Հատուկ տպագրությամբ շապիկներ	հատ	50	3 806	190 300	
	ԸՆԴԱՄԵՆԸ				**7701300**	

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:**

«Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամ

Կազմակերպության ղեկավար

_____ / _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն) ԿՏ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

_____ / _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն) ԿՏ

Հավելված 3
«16» հունիս 2023 թ. կնքված
N **ԱԵՊ 1-2023** պայմանագրի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ մշակույթի նախարարի
«12» փետրվարի 2010 թ. N 26-Ա հրամանով

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպություն_____

Միջոցառման անվանումը «Ազգային երգ ու պար»

առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում»

Հ/Հ	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (±դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը՝				

«....» _____2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ /_____/
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____ /_____/
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 4
«16» հունիս 2023 թ. կնքված
N ԱԵՊ 1-2023 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

....

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշիչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխությունները ըստ համապատասխան հիմնական պատճառի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյ. 1+սյ.2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների միջև տարբերությունը (սյ.4-սյ.3)	Տարբերության պատճառը (սյ.2-ում նշված հիմնական ազդող գործոնների հիմնավորումը և սյ.5-ում նշված տարբերության պատճառաբանումը)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում»	ուսուցիչների թիվը							
	...							

_______________________________________ _______________

ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը ստորագրությունը

Հավելված 5
«16» հունիս 2023 թ. կնքված
N **ԱԵՊ 1-2023** պայմանագրի

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2023թ.

Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «16» «հունիս» 2023թ.
Պայմանագրի համարը՝ N **ԱԵՊ 1-2023**
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.